Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

Հոկտեմբեր

թիվ 10 (170)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Թել-Սել» ՓԲԸ-ին «Յունիստրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն, «Կատա» առևտրի տուն ՍՊԸ-ին և «Պլազա սիստեմս» ՓԲԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, ինչպես նաև որոշ ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Գրավագարտ» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու, «Ֆրեշ» ՍՊԸ-ի փոխանակման կետի մասնաճյուղի արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ին նոր դասերով ապահովագրական գործունեություն իրականացնելու թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն գրանցելու և ներդրումային ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիա տրամադրելու, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի և «Գուդկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի մի շարք մասնաճյուղեր, ինչպես նաև «Ռուսաստանյան գյուղատնտեսական բանկ» ԲԲԸ-ի ներկայացուցչությունը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 3 ՓԲԸ-ների, 4 ՍՊԸ-ների, 1 գրավատան և 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու և 2 արտարժույթի փոխանակման կետերի, 2 ՍՊԸ-ների, 1 ՓԲԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 241-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 242-Ն որոշումը «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ը հաստատելու մասին»

17 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 243-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 253-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

26 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 256-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Մենամարտի արվեստը» հուշադրամների շարքից «Կարատե» և «Կոխ» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

28 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 271-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական վանքերը և եկեղեցիները» հուշադրամների շարքից «Սաևահիև», «Գոշավանք» և «Կեչառիս» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

31 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 260Ա):

- ***«Յունիստրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Թել-Սել» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 258Ա):

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Կատա» առևտրի տուն սահմանափակ պատասխանատվությամբ և «Պլազա սիստեմս» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 259Ա, 279Ա):

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Կրեդիտ-Լայն» և «Ֆաստ-Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատան կազմակերպման լիցենզիաների գործողությունը (որոշումներ թիվ 261Ա, 269Ա):

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Գրավագարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 265Ա):

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Ֆրեշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փոխանակման կետի մասնաճյուղի արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 268Ա):

- ***Նոր դասերով («առողջության ապահովագրություն» և «աջակցության ապահովագրություն») ապահովագրական գործունեություն իրականացնելու թույլտվություն է տրամադրվել*** «Սիլ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 276Ա):

- ***Գրանցվել և ներդրումային ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիա է տրամադրվել*** «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 278Ա):

- ***Գրանցվել են*** «Կոնվերս բանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ «էրեբունի» և «Գուդկրեդիտ» ՈւՎԿ փակ բաժնետիրական ընկերության «Մալաթիա» և «Բանգլադեշ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/1029Ա, 1/1091Ա):

- ***Գրանցվել է*** «Ռուսաստանյան գյուղատնտեսական բանկ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացուցչությունը (որոշում թիվ 1/1053Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 3 փակ բաժնետիրական, 4 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 1 գրավատան, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 10290000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/1010Ա, 1/1034Ա, 1/1037Ա, 1/1002Ա, 1/1036Ա, 1/1042Ա, 1/ 1075Ա, 1/1003Ա, 1/1014Ա) և 2 արտարժույթի փոխանակման կետերի, 2 սահմանափակ պատասխանատվությամբ, 1 փակ բաժնետիրական ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1004Ա-1/1006Ա, 1/1008Ա, 1/1039Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հաշվի առնելով, որ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից այսուհետ կազմակերպվելու է նոր՝ ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում առևտուրը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կարգավորվող շուկայում իրականացվելու են նաև արտարժույթով գործարքներ,

Նպատակ ունենալով ապահովել կարգավորվող շուկայում իրականացվող նոր գործարքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը Կենտրոնական բանկ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 141-րդ և 207-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ը հաստատելու մասին թիվ 356-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետը «ճշտությամբ» բառից հետո լրացնել «եթե սույն կանոնակարգով այլ կարգ սահմանված չէ» բառերով,

2) Կանոնակարգի 26-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով կնքվել են գործարքները:»,

3) Կանոնակարգի 27.1-րդ կետում լրացնել 15-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«15) «Գործարքի արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:»,

4) Կանոնակարգի 27.2-րդ կետում՝

ա. 1-ին պարբերությունում «վարկային ռեսուրսների հարթակում» բառերը փոխարինել «օվերնայթ և (կամ) ժամկետային վարկային ռեսուրսների հարթակներում» բառերով,

բ. 8-րդ ենթակետում «0.1 Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ» բառերը փոխարինել «ստորակետից հետո 1 նիշի ճշտությամբ» բառերով,

գ. լրացնել 11-րդ և 12-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

«11) «Գործարքի արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի կոդը, որով արտահայտված է վարկային ռեսուրսը,

12) «Շուկայի հարթակը» սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող վարկային ռեսուրսների շուկայի այն հարթակի անվանումը, որտեղ տվյալ գործարքը կնքվել է, մասնավորապես՝ լրացվում է «օվերնայթ վարկային ռեսուրսների հարթակ» կամ «ժամկետային վարկային ռեսուրսների հարթակ:»,

5) Կանոնակարգի 27.3-րդ կետը լրացնել 14-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«14) «Գործարքի արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:»,

6) Կանոնակարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետում՝

ա. 1-ին նախադասությունը «վարկային» բառից առաջ լրացնել «օվերնայթ» բառով,

բ. լրացնել ««11» - ժամկետային վարկային ռեսուրսների հարթակ» պարբերությամբ,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. սեպտեմբերի 18-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.10.2012 թ. (ՀՀՊՏ N28 (441), 15.11.2012):

7) Կանոնակարգի 31-րդ կետի 7-րդ ենթակետում՝

ա. 1-ին նախադասությունը «վարկային» բառից առաջ լրացնել «օվերնայթ» բառով,

բ. լրացնել ««11» - ժամկետային վարկային ռեսուրսների հարթակ» պարբերությամբ,

8) Կանոնակարգի 32-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն հաշվետվությունը լրացվում է այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով տեղաբաշխվել են տվյալ դասի արժեթղթերը:»,

9) Կանոնակարգի 33-րդ կետը լրացնել 14-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«14) Արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի կոդը, որով տեղաբաշխվել են տվյալ դասի արժեթղթերը:»,

10) Կանոնակարգի 37-րդ կետում՝

ա. 1-ին պարբերությունում «համապատասխան» բառից հետո լրացնել «, ընդ որում, սույն հաշվետվությունը լրացվում է այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով արտահայտված է շուկայի մասնակցի կողմից ներկայացված հայտում (հասցեական առաջարկում) նշված միավոր արժեթղթի գինը» բառերով,

բ. լրացնել 7-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) Արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի կոդը, որով արտահայտված է շուկայի մասնակցի կողմից ներկայացված հայտում (հասցեական առաջարկում) նշված միավոր արժեթղթի գինը:»,

11) Կանոնակարգի 39-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն հաշվետվությունը լրացվում է այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով արտահայտված են մինչև առևտրային նստաշրջանը դեպոնացված և (կամ) առևտրային նստաշրջանից հետո մնացած դրամական միջոցները:»,

12) Կանոնակարգի 40-րդ կետը լրացնել 9-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) Արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի կոդը, որով արտահայտված են մինչև առևտրային նստաշրջանը դեպոնացված և (կամ) առևտրային նստաշրջանից հետո մնացած դրամական միջոցները:»,

13) Կանոնակարգի Հավելված 1-ի Աղյուսակ 23-ի 4.5-րդ տողում «Վարկային ռեսուրսների հարթակում» բառերը փոխարինել «Վարկային ռեսուրսների հարթակներում» բառերով,

14) Կանոնակարգի Հավելված 2-ը, Հավելված 5-ը, Հավելված 7-ը և Հավելված 8-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման՝ համապատասխանաբար Հավելված 1-ի, Հավելված 2-ի, Հավելված 3-ի և Հավելված 4-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ

19 սեպտեմբերի 2012 թ., N 241-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 241-Ն որոշմամբ

Հավելված 2
«Կարգավորվող շուկայի օպերատորի՝ կենտրոնական բանկ
ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ի հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(օրական)

Աղյուսակ 1. Արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Հիմնադրամ գործող ոչ պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումը	Հիմնադրամ գործող պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումը	Առուծախի տեսակը	Միջնորդի կողմից գործարքի կատարման վճարման ենթակա գումարը	ՕՏՀ կենտրոնի վճարման ենթակա գումարը	Գործարքի կնքման ամսաթիվը	Գործարքի կատարման ամսաթիվը	Արժեթղթերի քանակը	Գործարքի գումարը	Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցին (անդամին) կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդը		Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) կողմից շնորհված կոդը	Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) անվանումը	Միջոցառման կարգը
											գնորդ	վաճառող			
1															
2															
...															

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ. Տ.

Աղյուսակ 2. Վարկային ռեսուրսներով կնքված գործարքների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Գործարքի կնքման ամսաթիվ	Վարկային ռեսուրսների մուտքագրման ամսաթիվ	Գործարքի կնքման ժամանակից հինգ աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրված գործարքների տեսակարար կշիռը (%)	Գործարքի կնքման ժամանակից հինգ աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրված գործարքների տեսակարար կշիռը (%)	Գործարքի կնքման ժամ	Գործարքի արժութային ISIO կոդը	Հիմնադրամի կողմից (մուտք) կատարված գումարը	Տրամադրված վարկային ռեսուրսների ընդհանուր ծավալը	Վարկային ռեսուրսների (մուտքի) ընդհանուր ծավալը	Գործարքի կողմ հանդիսացող վարկային ռեսուրսների շուկայի մասնակցի կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդը		Հոդվածի միասնական վիճակագրական համարը
										ներգրավող	տեղաբաշխող	
1												
2												
...												

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ. Տ.

Աղյուսակ 3. Ռեպո գործարքների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Գործարքի կնքման ամսաթիվ - տեղական ժամանակով	Գործարքի կնքման ամսաթիվ - ժամանակ չհիմնվելով	Գործարքի կնքման ամսաթիվ - ժամանակ հիմնվելով	Գործարքի կնքման ժամ	Գործարքի կնքման ամսաթվի միասնական ինդեքսային համարը	Գործարքի կնքման ժամ - տեղական ժամանակով	Գործարքի կնքման ժամ - ժամանակ չհիմնվելով	Գործարքի կնքման ժամ - ժամանակ հիմնվելով	Տրամադրված տեղեկատվության ծավալը	Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցին (անդամին) կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդը		Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) կոդը	Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) կոդը , ում անունից գործարքը կնքվել է	Հոդվածի միասնական վիճակագրական համարը
										գնորդ	վաճառող			

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 241-Ն որոշմամբ

Հավելված 5
«Կարգավորվող շուկայի օպերատորի՝ կենտրոնական բանկ
ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ի հավելվածի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 9

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(յուրաքանչյուր փոփոխության դեպքում)

Աղյուսակ 1. Կարգավորվող շուկայում առևտրին արժեթղթերի թույլտվության տրամադրում

Օպերատորի անվանումը _____

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը _____

N	Թողարկողի անվանումը, ընդհանուր բնութագիրը	Արժեթղթի տեսակը, ծածկագիրը (համարը)	Արժեթղթի ձևը	Առևտրին թույլատրված արժեթղթերի ընդհանուր ծավալը (քանակով և դրամական արտահայտությամբ)	Արժեթղթի ISIN կոդը	Տեղեկատվության աղբյուրները	Առևտրի մեկնարկի ամսաթիվը	Առևտրի ավարտի ամսաթիվը (եթե հայտնի է)	Առևտրի կասեցման կամ դադարեցման հիմքերը	Առևտրի վերսկսման ամսաթիվը (եթե հայտնի է)	Առևտրի կասեցման կամ դադարեցման ընթացակարգը	Առևտրի կասեցման կամ դադարեցման ընթացակարգի կատարման ամսաթիվը	Առևտրի վերսկսման ընթացակարգը	Առևտրի վերսկսման ընթացակարգի կատարման ամսաթիվը	Հոդված
1															
2															
.....															

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ. Տ.

Աղյուսակ 2. Կարգավորվող շուկայում առևտրին արժեթղթերի թույլտվության դադարեցում

Օպերատորի անվանումը _____

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը _____

N	Թողարկողի ֆիրմային անվանումը, ընդունելության վայրի նկարագրությունը	Արժեթղթերի տեսակը	Սոռն արժեթղթի	Արժեթղթերի միջազգային նույնականացման համարի կամ ներքին կոդի նշումը (առկայության դեպքում)	Տեղադրման ցուցակի կարգը	Արժույթի ISO կոդը	Ընդհանուր թողարկման չափը	Արժեթղթերի թողարկման ամսաթիվը	Արժեթղթերի առևտրի սկսման ամսաթիվը	Արժեթղթերի առևտրի դադարեցման ամսաթիվը	Արժեթղթերի առևտրի դադարեցման պատճառները	Արժեթղթերի առևտրի դադարեցման ամսաթիվը	Արժեթղթերի առևտրի վերսկսման ամսաթիվը	Ընդհանուր միջոցների չափը	Հղումը	Նշումներ
1																
2																

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ. S.

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 241-Ն որոշմամբ

Հավելված 7
«Կարգավորվող շուկայի օպերատորի՝ կենտրոնական բանկ
ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ի հավելվածի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 11

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ (ԱՆԴԱՄՆԵՐԻ) ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(օրական)

Աղյուսակ 1. Արժեթղթերի առուվաճառքի հայտերի վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Հայտի տարբերակային համարը	Հայտի ենթակա արժեթղթերի (դրամային) ծավալը կամ քանակը	Հայտով նախատեսված գործարքի կնքման ժամկետը (դրամային)	Հայտով նախատեսված գործարքի տեսակը	Ակտիվի տեսակը	Արժեթղթի ISO կոդը	Արժեթղթի անվանումը	Արժեթղթերի քանակը	Ընդհանուր տոկոսադրույքը	Հայտի տակ ընկած դրամական միջոցների չափը	Հայտի տակ ընկած դրամական միջոցների չափը՝ ելնելով ժամկետային կառուցվածքից	Հայտի տակ ընկած արժեթղթերի չափը	Կարգավորվող շուկայի կողմից հաշվարկված մարժինային պահանջի չափը (%)՝ ելնելով հայտի ընդունման պահին	Գործարքի կողմ	Հայտի ենթակա գումար	Գործարքի գումարի արժույթը

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ. Տ.

Աղյուսակ 2. Առուվաճառքի և ռեպո գործարքների հասցեական առաջարկների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Ներդրումային միավորների փոխանցման տրամաբանական հասցեի համարը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի անվանումը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի տեսակը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի կարգավիճակը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի ստեղծման ամսաթիվը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի փակման ամսաթիվը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի վերաբացման ամսաթիվը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի վերաբացման պատճառը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի փակման պատճառը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի սեփականատիրոջ (սեփականատերերի) անունը (անվանումը)	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի սեփականատիրոջ (սեփականատերերի) հասցեն	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի սեփականատիրոջ (սեփականատերերի) հեռախոսահամարը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի սեփականատիրոջ (սեփականատերերի) էլ. հասցեն	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնության փաստաթղթի տեսակը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնության փաստաթղթի համարը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնության փաստաթղթի տրման ամսաթիվը	Ներդրումային միավորների փոխանցման հասցեի սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնության փաստաթղթի տրման մարմինը

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 241-Ն որոշմամբ

Հավելված 8
«Կարգավորվող շուկայի օպերատորի՝ կենտրոնական բանկ
ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ի հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(օրական)

Աղյուսակ 1. Հաճախորդների արժեթղթերով կամ դրամական միջոցներով կնքված գործարքներ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) անվանումը		ԱՐԺԵԹՂԹԵՐ					ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ		
			Թողարկման պետական գրանցման համարը (արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը)	Առևտրային նստաշրջանի սկզբում արժեթղթերի ծավալը	Արժույթի ISO կոդը	Առևտրային նստաշրջանի վերջում արժեթղթերի ծավալը	Առաքման կամ ստացման ենթակա արժեթղթերի ծավալը	Դրամական միջոցները առևտրային նստաշրջանի սկզբում	Դրամական միջոցների մնացորդը առևտրային նստաշրջանի վերջում	Վճարման կամ ստացման ենթակա դրամական միջոցները
1		1								
		2								
		...								
2		1								
		2								
		...								

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ. Տ.

Աղյուսակ 2. Սեփական արժեթղթերով կամ դրամական միջոցներով կնքված գործարքներ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

(ՀՀ դրամ)

N	Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) անվանումը		ԱՐԺԵԹՂԹԵՐ					ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ		
			Թողարկման պետական գրանցման համարը (արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը)	Արժույթի ISO կոդը	Առևտրային նստաշրջանի սկզբում արժեթղթերի ծավալը	Առևտրային նստաշրջանի վերջում արժեթղթերի ծավալը	Առաքման կամ ստացման ենթակա արժեթղթերի ծավալը	Դրամական միջոցները առևտրային նստաշրջանի սկզբում	Դրամական միջոցների մնացորդը առևտրային նստաշրջանի վերջում	Վճարման կամ ստացման ենթակա դրամական միջոցները
1		1								
		2								
		...								
2		1								
		2								
		...								

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ. Տ.

*«Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով թույլատրել Կենտրոնական դեպոզիտարիային իրականացնելու իր գործունեության հետ առնչվող լրացուցիչ գործունեության տեսակներ, խթանելու Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող գործունեության տեսակների քանակի և ծավալի աճը, նվազեցնելու և զսպելու դրանց իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը, 199-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 սեպտեմբերի 2012 թ., N 242-Ն

Հ ա վ ե լ վ ա ծ
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 5/09

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակների իրականացման կարգն ու պայմանները:
2. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակների իրականացումը կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնակարգով, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:
3. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող նշանակությունը:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. սեպտեմբերի 18-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.10.2012 թ. (ՀՀՊՏ N28 (441), 15.11.2012):

ԳԼՈՒԽ 2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող գործունեությունը համարվում է լրացուցիչ, եթե այն բավարարում է հետևյալ չափանիշներից առնվազն մեկը.

1) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով հնարավորություն է տրված Կենտրոնական դեպոզիտարիային իրականացնելու այդ լրացուցիչ գործունեության տեսակը,

2) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով նախատեսված գործունեության այնպիսի տեսակ, որի իրականացումն ուղղակիորեն կապված է Կենտրոնական դեպոզիտարիայի՝ որպես ներդրումային ֆոնդի, այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի, ներդրումային ֆոնդի պահառուի կամ ներդրումային ֆոնդին առնչվող այլ գործառույթների իրականացման հետ,

3) այն կապված է իր կողմից հաշվառվող արժեթղթերի գծով եկամուտների (շահութաբաժին, տոկոս, պարտքային արժեթղթերի մարման հետևանքով վճարներ և այլն) վճարման կամ դրա կազմակերպման հետ, այդ թվում՝ որպես հարկային գործակալ հանդես գալու հետ,

4) այն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և (կամ) թողարկողի կանոնադրությամբ նախատեսված՝ թողարկողի կառավարման հետ կապված գործողությունների հետ,

5) այն կապված է կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթ չհանդիսացող այլ ֆինանսական ակտիվներով առևտրի արդյունքում առաջացած պարտավորությունների կատարման ապահովման հետ:

ԳԼՈՒԽ 3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5. Լրացուցիչ գործունեության տեսակների իրականացման թույլտվություն ստանալու համար Կենտրոնական դեպոզիտարիան Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) գործունեության՝ սույն կանոնակարգի 4-րդ կետում նախատեսված չափանիշներից առնվազն մեկը բավարարելու վերաբերյալ հիմնավորումը,

2) լրացուցիչ գործունեության տեսակների իրականացումն ապահովող կանոնները (համապատասխան կանոնների փոփոխությունները, լրացումները): Ընդ որում, լրացուցիչ գործունեության տեսակների իրականացումն ապահովող կանոնների (համապատասխան կանոնների փոփոխությունների, լրացումների) հանդեպ կիրառվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների (կանոնների փոփոխությունների, լրացումների) և դրանց գրանցման հանդեպ պահանջները,

3) ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգը (ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգի փոփոխությունները, լրացումները): Ընդ որում՝

ա. ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգում բացահայտվում են լրացուցիչ գործունեության տեսակների իրականացումից բխող բոլոր էական ռիսկերը (այդ թվում՝ ֆինանսական, գործառնական, իրավական, բարի համբավի), Կենտրոնական դեպոզիտարիայի համար այդ ռիսկերի ընդունելի մակարդակը, այդ մակարդակին հասնելուն և պահելուն ուղղված միջոցառումները,

բ. ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգի դրույթների՝ արդեն իրականացվող լրացուցիչ գործունեության տեսակներով պայմանավորված փոփոխությունների (լրացումների կամ դրույթների դադարեցման) վերաբերյալ առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:

6. Սույն կանոնակարգի 5-րդ կետով նախատեսված թույլտվությունը համարվում է տրված սույն կանոնակարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի միջև ժամկետային վարկային հարթակում կնքված գործարքների հետ կապված՝ երաշխիքային միջոց հանդիսացող պետական արժեթղթերի հաշվառման գործընթացը Կենտրոնական բանկի «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում» ապահովման և առանձին անալիտիկ դեպո հաշիվներով հաշվառման անհրաժեշտությունը,

Նպատակ ունենալով հստակեցնել «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում» դեպո հաշիվների բացման սկզբունքները՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պետական արժեթղթերի ենթապահառության գործունեության իրականացման համար,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետը, 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին», «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության», «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» կարգերը հաստատելու մասին» թիվ 75-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին» կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության» բառերով,

2) 4-րդ կետում.

ա. «բ» ենթակետում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերով,

բ. լրացնել «է» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կենտրոնական դեպոզիտարիա՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա».

3) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Պահառուի գործառույթները կատարում է բանկը, իսկ ենթապահառուների գործառույթները կատարում են գործակալները, դիլերները, Գանձապետական պահառուն, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիան: Պահառուի և ենթապահառուների մոտ վարվող գրառումները հավաստում են պարտատոմսերի նկատմամբ և (կամ) պարտատոմսերից բխող անձանց իրավունքները, եթե դատական կարգով այլ բան չի ապացուցվում:»,

4) լրացնել 7.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1. Կենտրոնական դեպոզիտարիան, որպես ենթապահառու իրականացնում է սույն կարգով սահմանված ենթապահառուի գործառույթները միայն ներդրողների համար, իսկ ենթապահառուի կողմից սեփական անունից արժեթղթեր ունենալու և առաջնային աճուրդին մասնակցելու հետ կապված դրույթները չեն տարածվում Կենտրոնական դեպոզիտարիայի վրա:»:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. սեպտեմբերի 18-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.10.2012 թ. (ՀՀՊՏ N28 (441), 15.11.2012):

2. Որոշման 4-րդ կետով հաստատված «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման» կարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 սեպտեմբերի 2012 թ., N 243-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 243-Ն որոշմամբ

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐԻ ԿՈԴԱՎՈՐՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում, ինչպես նաև ենթապահառուների մոտ կիրառվող դեպո հաշվեհամարների կոդավորման սկզբունքները:

2. Սույն կարգի իմաստով՝

1) ***Պարտատոմս***՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից թողարկված պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնց հաշվառումը իրականացվում է համակարգի կողմից,

2) ***Համակարգ***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ,

3) ***Մասնակից***՝ համակարգում դեպո հաշիվ ունեցող անձ,

4) Համակարգի մասնակիցներ՝

ա. ***Պահառու***՝ Կենտրոնական բանկ,

բ. ***թողարկող***՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը,

գ. ***ենթապահառուներ***՝ գործակալներ/դիլերներ, Գանձապետական պահառու, գործակալ/դիլեր չհանդիսացող առևտրային բանկեր, Կենտրոնական դեպոզիտարիա,

5) ***Պահառու***՝ թողարկողի առջև պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող, պարտատոմսերի թողարկման գլոբալ հավաստագիրը պահող և հաշվառող, պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որը վարում է համակարգի մասնակիցների դեպո հաշիվները: Պահառուի գործառույթներն իրականացնում է Կենտրոնական բանկը,

6) ***Ներդրող***՝ պարտատոմսերի սեփականատեր հանդիսացող և ենթապահառուի մոտ պարտատոմսերի դեպո հաշիվ ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

7) ***Ենթապահառու***՝ պահառության գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որը վարում է ներդրողների դեպո հաշիվները: Սույն կարգի իմաստով՝ ենթապահառու են գործակալները/դիլերները, Գանձապետական պահառուն և Կենտրոնական դեպոզիտարիան: Գանձապետական պահառուն և Կենտ-

րոնական դեպոզիտարիան ենթապահառուական ծառայություններ մատուցում են միայն ներդրողների համար,

8) ***Դեպո հաշիվ***՝ պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված պահառուի/ենթապահառուի գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով,

9) ***Ակտիվային դեպո հաշիվ***՝ դեպո հաշիվ, որում պարտատոմսերը հաշվառվում են ըստ պահպանման տեղի,

10) ***Պասիվային դեպո հաշիվ***՝ դեպո հաշիվ, որում պարտատոմսերը հաշվառվում են ըստ պատկանելության,

11) ***Անալիտիկ դեպո հաշիվ***՝ դեպո հաշիվ, որում հաշվառվում են առանձին մասնակցի կամ ներդրողի իրավունքները բոլոր թողարկումների պարտատոմսերի նկատմամբ, որոնք ունեն միևնույն կարգավիճակը (պասիվային հաշիվների համար), կամ որում հաշվառվում են բոլոր թողարկումների պարտատոմսերն ըստ պարտատոմսերի առանձին պահպանման տեղի (ակտիվային հաշիվների համար),

12) ***Ենթահաշիվ***՝ անալիտիկ հաշվի ներքո բացված հաշիվ, որում հաշվառվում են տվյալ կարգավիճակի առանձին թողարկման պարտատոմսերը: Ենթահաշիվը դեպո հաշվառման նվազագույն անբաժանելի միավորն է,

*13) ***Կենտրոնական բանկ***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

3. Պարտատոմսերի հաշվառումն իրականացվում է պահառուի և ենթապահառուների մոտ վարվող համապատասխան դեպո հաշիվներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին կարգի» համաձայն:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՀԱՌՈՒԻ ՄՈՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՆԱԼԻՏԻԿ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

4. Անալիտիկ հաշվառման նպատակով պահառուի մոտ բացվում են անալիտիկ հաշիվներ (ակտիվային և պասիվային):

Պահառուի մոտ կիրառվում են դեպո հաշիվների հետևյալ տեսակները՝

1) Պահառուի հաճախորդների սեփական պարտատոմսերի դեպո հաշիվներ (ենթապահառուի, գործակալ/դիլեր չհանդիսացող առևտրային բանկերի սեփական պարտատոմսերի դեպո հաշիվներ),

2) ենթապահառուի ներդրողներին պատկանող պարտատոմսերի ամփոփ դեպո հաշիվներ,

3) թողարկողի դեպո հաշիվներ,

4) պահառուի դեպո հաշիվներ,

5) Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ Պահառուի հաճախորդ հանդիսացող այլ մասնակիցների դեպո հաշիվներ:

5. Հաշվեհամարների կառուցվածքը և դրանց տարրերի կոդերը:

1) Հաշվեհամարներն ունեն հետևյալ կառուցվածքը՝

Հաշիվ			
X1X2X3X4X5	X6	X7	X8
I	II	III	IV

Հաշվեհամարների կառուցվածքում		
I	X1X2X3X4X5 - նիշերը	հաշվետիրոջ կոդն է
II	X6 - նիշը	կարգավիճակի կոդն է
III	X7 - նիշը	դեպո հաշվի տեսակի կոդն է
IV	X8 - նիշը	ստուգիչ նիշն է

2) Հաշվետիրոջ կոդը տրվում է պահառուի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, վերջիններիս հաճախորդների հաշվեհամարների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կարգի» համաձայն:

X6 - X7 նիշերը թվային են (0 - 9 թվեր):

3) Ստուգիչ նիշը հաշվարկվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով (հավելված 1, կցվում է):

4) Հաշվեհամարների կառուցվածքի տարրերը (նիշերը) կարող են ընդունել հետևյալ կոդերը.

---

* *Պաշտոնական հրապարակման մեջ սպրդել է թվարկման տեխնիկական վրիպակ:*

Հաշիվ			
X1X2X3X4X5	X6	X7	X8
I	II	III	IV

Հաշվեհամարների կառուցվածքում		
I	Հաշվից կախված ընդունում է հետևյալ կոդերը	- Պահառուի կոդ - Թողարկողի կոդ - Պահառուի մոտ ենթապահառուի, գործակալ/դիլեր չհանդիսացող առևտրային բանկի և այլ մասնակցի կոդ - Կենտրոնական բանկի որպես երկրորդային շուկայի մասնակցի կոդ
II	Հաշվից կախված ընդունում է հետևյալ կարգավիճակները	«Ընդունված հաշվառման» կարգավիճակ - 0 «Տեղաբաշխման ենթակա պարտատոմսեր» կարգավիճակ - 1 «Հետգնված պարտատոմսեր» կարգավիճակ - 2 «Մարված պարտատոմսեր» կարգավիճակ – 3 «Ազատ» կարգավիճակ – 4 «Գրավով սահմանափակված» կարգավիճակ - 5 «Արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 6 «Գրավադրված արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 8
III	Հաշվից կախված ընդունում է հետևյալ հաշվի տեսակի կոդը	«Պահառուի պարտատոմսեր» հաշիվների խմբի իդենտիֆիկատորի կոդ - 0 «Թողարկողի պարտատոմսեր» հաշիվների խմբի իդենտիֆիկատորի կոդ -1 «Սեփական պարտատոմսեր» հաշվի տեսակի կոդ – 2 «Ներդրողներին պատկանող պարտատոմսեր» ամփոփ դեպո հաշվի տեսակի կոդ – 3 «Ռեպո գործարքների ապահովվածության համար պետական արժեթղթեր» հաշվի տեսակի կոդ – 4 «Հակադարձ ռեպո գործարքների կատարման համար պետական արժեթղթեր» հաշվի տեսակի կոդ – 5
IV	Ստուգիչ նիշ	

ԳԼՈՒԽ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԴԵՊՈ ՀԱՇԻՎՆԵՐԸ

6. Թողարկողի դեպո հաշիվ՝ պասիվային հաշիվ է, որը բացում և վարում է պահառուն՝ թողարկողի կողմից թողարկված պարտատոմսերը հաշվառելու համար:

7. Պարտատոմսերը հաշվառվում են ըստ հետևյալ կարգավիճակով հաշիվների (X6 մասնիկը)՝

1) տեղաբաշխման ենթակա պարտատոմսեր՝ պարտատոմսեր, որոնք թողարկողի կողմից թողարկվել են և ներկայացված են տեղաբաշխման համար,

2) հետգնված պարտատոմսեր՝ պարտատոմսեր, որոնք հետ են գնվել թողարկողի կողմից մինչև մարման օրը,

3) մարված պարտատոմսեր՝ պարտատոմսեր, որոնք դուրս են եկել շրջանառությունից, և որոնց դիմաց հասանելիք գումարը վճարվել է:

8. Թողարկողի դեպո հաշիվներն ունեն հետևյալ կառուցվածքը՝

Հաշիվ			
X1 X2 X3X4X5	X6	X7	X8
*	**	***	****

1)* Թողարկողի կոդ

2)** «Տեղաբաշխման ենթակա պարտատոմսեր» կարգավիճակ - 1
«Հետգնված պարտատոմսեր» կարգավիճակ - 2
«Մարված պարտատոմսեր» կարգավիճակ - 3

3)*** «Թողարկողի պարտատոմսեր» հաշիվների խմբի իդենտիֆիկատոր -1

4)**** Ստուգիչ նիշ:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՀԱՌՈՒԻ ԴԵՊՈ ՀԱՇԻՎԸ

9. Պահառուի դեպո հաշիվ՝ ակտիվային հաշիվ է, որտեղ հաշվառվում է թողարկողի կողմից թողարկված և պահառուի կողմից հաշվառման վերցված պարտատոմսերի ծավալը: Ընդ որում, թողարկված պարտատոմսերի հանրագումարը պետք է համընկնի գլոբալ հավաստագրերում (կամ թողարկողի հրամաններում) նշված պարտատոմսերի ընդհանուր ծավալի հետ:

10. Պահառուի դեպո հաշիվն ունի հետևյալ կառուցվածքը՝

Հաշիվ			
X1 X2 X3X4X5	X6	X7	X8
*	**	***	****

1)* Պահառուի կոդ - 105000

2)** «Ընդունված հաշվառման» կարգավիճակ - 0

3)*** «Պահառուի պարտատոմսեր» հաշիվների խմբի իդենտիֆիկատոր - 0

4)**** Ստուգիչ նիշ:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՀԱՌՈՒԻ ՄՈՏ ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒՆԵՐԻ, ԳՈՐԾԱԿԱԼ/ԴԻԼԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԵՊՈ ՀԱՇԻՎՆԵՐԸ

11. Պահառուի մոտ յուրաքանչյուր ենթապահառուի համար վարվում են 2 տեսակի դեպո հաշիվներ՝ ենթապահառուի սեփական պարտատոմսերի դեպո հաշիվ և տվյալ ենթապահառուի ներդրողներին պատկանող պարտատոմսերի ամփոփ դեպո հաշիվ: Ընդ որում.

1) Գործակալ/դիլեր չհանդիսացող առևտրային բանկերի համար վարվում է միայն իրենց սեփական պարտատոմսերի դեպո հաշիվ,

2) Կենտրոնական դեպոզիտարիայի և Գանձապետական պահառուի համար բացվում է միայն ներդրողներին պատկանող պարտատոմսերի ամփոփ դեպո հաշիվ,

3) Այլ մասնակիցների համար դեպո հաշիվները բացվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշման համաձայն՝ ըստ սույն կետում նշված հաշիվների տեսակների:

12. Պահառուի մոտ՝ ենթապահառուի, գործակալ/դիլեր չհանդիսացող առեւտրային բանկի և այլ մասնակցի, ինչպես նաև Կենտրոնական բանկի՝ որպես երկրորդային շուկայի մասնակցի դեպո հաշիվն ունի հետևյալ կառուցվածքը.

1) Պահառուի մոտ՝ ենթապահառուի, գործակալ/դիլեր չհանդիսացող առևտրային բանկի և այլ մասնակցի դեպո հաշիվն ունի հետևյալ կառուցվածքը.

Հաշիվ			
X1X2X3X4X5	X6	X7	X8
I	II	III	IV

Որտեղ՝		
I		- Պահառուի մոտ՝ ենթապահառուի, գործակալ/դիլեր չհանդիսացող առևտրային բանկի և այլ մասնակցի կոդը
II	Սույն հաշվի համար ընդունում է հետևյալ կարգավիճակները	«Ազատ» կարգավիճակ – 4 «Գրավով սահմանափակված» կարգավիճակ - 5 «Արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 6 «Գրավադրված արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 8
III	Սույն հաշվի համար ընդունում է հետևյալ հաշվի տեսակի կոդը	«Սեփական պարտատոմսեր» հաշվի տեսակի կոդ – 2 «Ներդրողներին պատկանող պարտատոմսեր» ամփոփ դեպո հաշվի տեսակի կոդ – 3
IV	Ստուգիչ նիշ	

2) Կենտրոնական բանկի դեպո հաշիվը, որպես երկրորդային շուկայի մասնակցի, ունի հետևյալ կառուցվածքը.

Հաշիվ			
X1X2X3X4X5	X6	X7	X8
I	II	III	IV

Որտեղ՝		
I		Կենտրոնական բանկի՝ որպես երկրորդային շուկայի մասնակցի կոդը
II	Սույն հաշվի համար ընդունում է հետևյալ կարգավիճակները	«Ազատ» կարգավիճակ – 4 «Գրավով սահմանափակված» կարգավիճակ - 5 «Արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 6 «Գրավադրված արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 8

III	Սույն հաշվի համար ընդունում է հետևյալ հաշվի տեսակի կոդը	«Սեփական պարտատոմսեր» հաշվի տեսակի կոդ – 2 «Ներդրողներին պատկանող պարտատոմսեր» ամփոփ դեպո հաշվի տեսակի կոդ – 3 «Ռեպո գործարքների ապահովվածության համար պետական արժեթղթեր» հաշվի տեսակի կոդ – 4 «Հակադարձ ռեպո գործարքների կատարման համար պետական արժեթղթեր» հաշվի տեսակի կոդ – 5
IV	Ստուգիչ նիշ	

13. Պարտատոմսերի հաշվառումն իրականացվում է ըստ հետևյալ կարգավիճակով հաշիվների (X6 մասնիկը).

1) «ազատ» կարգավիճակում համարվում են այն պարտատոմսերը, որոնց հետ գործառնությունների իրականացման սահմանափակում չկա,

2) «գրավով սահմանափակված» կարգավիճակում համարվում են այն պարտատոմսերը, որոնք գրավադրված են գրավատուի կողմից (համաձայն գրավադրման/պայմանագրի),

3) «արգելադրված (կալանված)» կարգավիճակում համարվում են ազատ պարտատոմսերը, որոնց օգտագործման վրա արգելանք է դրված դատարանի որոշմամբ (դատավճռով),

4) «գրավադրված արգելադրված (կալանված)» կարգավիճակում համարվում են գրավադրված պարտատոմսերը, որոնց օգտագործման վրա արգելանք է դրված դատարանի որոշմամբ (դատավճռով):

ԳԼՈՒԽ 6. ԵՆԹԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

14. Յուրաքանչյուր անալիտիկ հաշվի ներքո բացվում են ենթահաշիվներ՝ ըստ յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի:

Ենթահաշիվները կազմված են տվյալ պարտատոմսի 12-նիշանոց պետական գրանցման համարի 3-րդից մինչև 12-րդ նիշերը ներառյալ (առաջին երկու նիշերը ներկայացնում են երկիրը (էյէմ (AM)) և ենթահաշիվների մեջ չեն ներառվում)՝ ընդամենը 10 նիշ (արժեթղթի ունիկալ համարը և ստուգիչ նիշը):

ԳԼՈՒԽ 7. ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒԻ ՄՈՏ ՎԱՐՎՈՂ ԴԵՊՈ ՀԱՇԻՎՆԵՐԸ

15. Ենթապահառուի մոտ պարտատոմսերը հաշվառելու նպատակով բացվում են դեպո հաշիվներ՝ ըստ առանձին ներդրողների և ենթապահառուի սեփական պարտատոմսերի դեպո հաշիվ: Ենթապահառուի մոտ բացվող դեպո հաշիվների երկարությունը 13 նիշ է, որոնք պարտադիր են: Գործարքների կատարման հանձնարարականներում, ինչպես նաև հաղորդագրությունների ֆորմատների համապատասխան դաշտերում նշվում են տվյալ ենթապահառուի սեփական պարտատոմսերի և/կամ տվյալ ենթապահառուին պատկանող ներդրողի (ներդրողների) 13-նիշանոց դեպո հաշիվները:

16. Ենթապահառուի մոտ վարվող դեպո հաշիվներն ունեն հետևյալ կառուցվածքը՝

Հաշիվ			
X1X2X3X4X5	X6	X7X8 X9 X10X11X12	X13
*	**	***	****

1)* Ենթապահառուի կոդ
2)** Հաշվի կարգավիճակ
3)*** Տվյալ ենթապահառուի ներդրողի կոդ
4)**** Ստուգիչ նիշ

X6 մասնիկը կարող է ունենալ հետևյալ կոդերը՝

1) ազատ
2) գրավով սահմանափակված
3) արգելադրված (կալանված)
4) առևտրի համար նախատեսված
5) գրավադրված արգելադրված (կալանված)

X7X8X9X10X11X12 - տվյալ ենթապահառուի ներդրողի կոդն է, որը տրվում է ենթապահառուի կողմից, ընդ որում.

X7X8 մասնիկները ցույց են տալիս ներդրողի տեսակը.

X7 մասնիկը ցույց է տալիս ներդրողի կարգավիճակը՝

1) ռեզիդենտ ներդրողներ,
2) ոչ ռեզիդենտ ներդրողներ,

X8 մասնիկը ցույց է տալիս ներդրողի խումբն ըստ պատկանելության՝

1) բանկային հաստատություններ,
2) արժեթղթերի շուկայի մասնակիցներ (բրոքերային գրասենյակ և այլն),
3) ֆինանսավարկային կազմակերպություններ (ոչ բանկային հաստատություններ),
4) այլ իրավաբանական անձ,
5) այլ ֆիզիկական անձ:

Ներդրողների կոդը տրվում է ենթապահառուի կողմից: Յուրաքանչյուր ենթապահառու ինքն է որոշում իր ներդրողների կոդերի կառուցվածքը՝ հաշվի առնելով, որ ներդրողի կոդը չի կարող հավասար լինել «000000», որն արտացոլում է ենթապահառուին պատկանող սեփական պարտատոմսերը:

X13 - ստուգիչ նիշն է, որը հաշվարկվում է համաձայն սույն կարգի Հավելված 1-ի:

17. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, որպես ենթապահառու՝ բացվող ենթահաշիվների կառուցվածքը կարող է տարբերվել սույն կարգով ենթապահառուի մոտ վարվող դեպո հաշիվների համար սահմանված կառուցվածքից: Սակայն Կենտրոնական դեպոզիտարիան առնվազն ապահովում է.

1) Հաշվառման իրականացումը՝ ըստ ներդրողների և վերջիններիս պետական արժեթղթերի և դրանց կարգավիճակի,

2) պետական պարտատոմսերի հաշվառումն անվանական ծավալով,

3) Կենտրոնական բանկի համակարգերով գործառնությունների կատարման ժամանակ տվյալ համակարգում կիրառվող հաղորդագրությունների համար Կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքով հաղորդագրությունների կիրառումը, այդ թվում՝ անհրաժեշտ տեսքով հաշիվների ներկայացումը:

Հավելված 1

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման կարգի

Ստուգիչ նիշի ձևավորման ալգորիթմը

Ստուգիչ նիշի հաշվարկման ժամանակ իրականացվում են հետևյալ հաջորդական քայլերը՝

1. Լատինական այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանում են թվային արժեքներ՝ սկսած 10-ից.

1) A=10	7) G=16	13) M=22	19) S=28	25) Y=34
2) B=11	8) H=17	14) N=23	20) T=29	26) Z=35
3) C=12	9) I=18	15) O=24	21) U=30	
4) D=13	10) J=19	16) P=25	22) V=31	
5) E=14	11) K=20	17) Q=26	23) W=32	
6) F=15	12) L=21	18) R=27	24) X=33	

2. Հաշվեհամարի նիշերից յուրաքանչյուրը բազմապատկվում է իրեն համապատասխանող կշռային գործակցով (1 և 2 թվերով):

3. Բազմապատկման արդյունքները գումարվում են, ընդ որում, յուրաքանչյուր նիշ գումարվում է որպես առանձին թիվ (տես օրինակը):

4. Ստուգիչ նիշը ստանալու համար գումարման արդյունքում ստացված թվին հաջորդող և առանց մնացորդի 10-ի բաժանվող թվից հանվում է վերոհիշյալ գումարման արդյունքը:

Բազմապատկման արդյունքների գումարման արդյունքում առանց մնացորդի 10-ի բաժանվող թիվ (օրինակ 30, 40 և այլն) ստանալու դեպքում ստուգիչ նիշը հավասար է 0-ի:

5. Հաշվեհամարի ստուգիչ նիշի հաշվարկ՝

Օրինակ 1. 121002795823K

1	2	1	0	0	2	7	9	5	8	2	3	K	″	Կոդ
x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x		″	(բազմապատկում)
1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2		″	կշռային գործակիցներ
1	4	1	0	0	4	7	18	5	16	2	6		″	բազմապատկման արդյունքներ

1+4+1+0+0+4+7+1+8+5+1+6+2+6=46
K=50-46=4

6. Հաշվեհամարը՝ 1210027958234

Օրինակ 2. 214001000000K

2	1	4	0	0	1	0	0	0	0	0	0	K	″ Կոդ
x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x		″ (բազմապատկում)
1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2		″ կշռային գործակիցներ
2	2	4	0	0	2	0	0	0	0	0	0		″ բազմապատկման արդյունքներ

2+2+4+0+0+2+0+0+0+0+0+0=10
Քանի որ գումարման արդյունքում ստացված թիվը (10) առանց մնացորդի բաժանվում է 10-ի, ստուգիչ նիշը հավասար է 0-ի:
Հաշվեհամարը՝ 2140010000000

Ստուգիչ նիշի ստուգման ալգորիթմ

7. Հաշվեհամարում ստուգիչ նիշի ստուգումն իրականացվում է հետևյալ հաջորդական քայլերի միջոցով.

1) Հաշվեհամարի նիշերը (ներառյալ՝ ստուգիչ նիշը) բազմապատկվում են իրենց համապատասխանող կշռային գործակցով (2 և 1 թվերով),

2) բազմապատկման արդյունքները գումարվում են, ընդ որում՝ յուրաքանչյուր նիշ գումարվում է որպես առանձին թիվ (տես օրինակ):

Եթե ստացված արդյունքն առանց մնացորդի բաժանվում է 10-ի, ապա ստուգիչ նիշը ճիշտ է հաշվարկված:

Օրինակ՝ 1210027958234

1	2	1	0	0	2	7	9	5	8	2	3	4	″ Կոդ
x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	″ (բազմապատկում)
1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	″ կշռային գործակիցներ
1	4	1	0	0	4	7	18	5	16	2	6	4	″ բազմապատկման արդյունքներ

1+4+1+0+0+4+7+1+8+5+1+6+2+6+4=50
Քանի որ գումարը (50) առանց մնացորդի բաժանվում է 10-ի, ստուգիչ նիշը ճիշտ է հաշվարկված:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով դրամական փոխանցումների համակարգերի կողմից մատուցվող ծառայությունների, ինչպես նաև այդ ծառայությունների մատուցման սպասարկման կետերի վերաբերյալ լիարժեք տեղեկատվությունը համակարգից օգտվողներին հասանելի դարձնելու միջոցով ապահովել սպառողների շահերի պաշտպանությունը,

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը և 8.1-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով և 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի ««Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 342-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «3-րդ մասը» բառերը փոխարինել «4-րդ մասը» բառերով:

2. Որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցում (այսուհետ՝ Ուղեցույց).

1) 4.1 կետի «զ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«զ) Սահմանված չէ օպերատորի պարտավորությունն ապահովել իր համակարգի սպասարկումը հայաստանյան մասնակցի բոլոր տարածքային ստորաբաժանումներում, այդ թվում.

սահմանված չէ համակարգի օպերատորի պարտավորությունն իր համակարգին միացված հայաստանյան մասնակցի բոլոր տարածքային ստորաբաժանումների և (կամ) համակարգը սպասարկող ինքնասպասարկման սարքավորումների (սպասարկման կետերի) հասցեների (առնվազն բնակավայրերի) վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել համակարգի ծրագրային ապահովման համակարգում/էլեկտրոնային տեղեկատուներում և ուղղակի ձևով (առանց հողումների) իր ինտերնետային կայքում, ինչպես նաև ապահովել այդ տեղեկատվության հասանելիությունը համակարգի բոլոր սպասարկման կետերում:»,

2) ուղեցույցի 4.1 ենթակետից հետո լրացնել 4.1.1 ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1.1. Օպերատորը չի ապահովում սույն կետի 4.1 ենթակետով սահմանված պահանջները:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 սեպտեմբերի 2012 թ., N 253-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. սեպտեմբերի 18-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 1.10.2012 թ. (ՀՀԳՏ N26 (439), 15.10.2012):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012 - 2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Մենամարտի արվեստը» հուշադրամների շարքից «Կարատե» և «Կոխ» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. 2012 թվականի նոյեմբերի 12-ից շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012 - 2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Մենամարտի արվեստը» հուշադրամների շարքից «Կարատե» և «Կոխ» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք հուշադրամների էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 հոկտեմբերի 2012 թ., N 256-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 256-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Կարատե» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Մենամարտի արվեստը» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Կարատե» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Օկինավա կղզում գտնվող Սյուրիձյո պալատի Սյուրեյմոն հայտնի դարպասները և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2012»: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով մակագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 1000 ԴՐԱՄ» և «REPUBLIC OF ARMENIA 1000 DRAM»: Եզրագծով տեղադրված են զարդանախշեր:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում պատկերված են երեք մարզիկներ, որոնք կատարում են կարատե մարզաձևին հատուկ հնարքներ: Կիսաշրջագծով մակագրված ԵՆ «ԿԱՐԱՏԵ» և «KARATE»:

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:
Հուշադրամի արտադրությունը կազմակերպվել է Շվեյցարիայի «Միջազգային դրամատուն» (International Coin House) ընկերության կողմից:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հոկտեմբերի 2-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.10.2012 թ. (ՀՀԳՏ N27 (440), 1.11.2012):

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	28,28 գ
Տրամագիծը	38,61 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 5000 հատ

1.1. «Կարատե» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. «Կոխ» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Մենամարտի արվեստը» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Կոխ» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Սևանի թերակղզում գտնվող «Սևանավանք» հայկական վանական համալիրը և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2012»: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով մակագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 1000 ԴՐԱՄ» և «REPUBLIC OF ARMENIA 1000 DRAM»: Եզրագծով տեղադրված են զարդանախշեր:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում պատկերված են երկու ըմբիշներ՝ լեռների ֆոնի վրա: Աջ և ձախ հատվածներում պատկերված են ազգային տարազներով նվագողներ: Կիսաշրջագծով մակագրված են «ԿՈԽ» և «KOKH»:

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

Հուշադրամի արտադրությունը կազմակերպվել է Շվեյցարիայի «Միջազգային դրամատուն» (International Coin House) ընկերության կողմից:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	28,28 գ
Տրամագիծը	38,61 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 5000 հատ

2.1. «Կոխ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012 - 2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական վանքերը և եկեղեցիները» հուշադրամների շարքից «Սանահին», «Գոշավանք» և «Կեչառիս» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. 2012 թվականի նոյեմբերի 12-ից շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012 - 2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական վանքերը և եկեղեցիները» հուշադրամների շարքից «Սանահին», «Գոշավանք» և «Կեչառիս» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք հուշադրամների էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
16 հոկտեմբերի 2012 թ., N 271-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հոկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.10.2012 թ. (ՀՀԳՏ N27 (440), 1.11.2012):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 271-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Սանահին» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Հայկական վանքերը և եկեղեցիները» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է «Սանահին» հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում պատկերված է Սանահինի վանքը:
Ձախ եզրագծով «2012 ՍԱՆԱՀԻՆԻ ՎԱՆՔ» և աջ եզրագծով «SANAHIN MONASTERY» մակագրություններն են: Վերևի աջ ու ձախ անկյուններում և ներքևի մասում պատկերված են զարդանախշեր:

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

1) Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

2) «Սանահին» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. «Գոշավանք» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Հայկական վանքերը և եկեղեցիները» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է «Գոշավանք» հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում պատկերված է Գոշավանքը:
Ձախ եզրագծով «2012 ԳՈՇԱՎԱՆՔ» և աջ եզրագծով «GOSHAVANK MONASTERY» մակագրություններն են: Վերևի աջ ու ձախ անկյուններում և ներքևի մասում պատկերված են զարդանախշեր:

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

1) Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

2) «Գոշավանք» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





3. «Կեչառիս» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Հայկական վանքերը և եկեղեցիները» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է «Կեչառիս» հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում պատկերված է Կեչառիսի վանքը:
Ձախ եզրագծով «2012 ԿԵՉԱՌԻՍԻ ՎԱՆՔ» և աջ եզրագծով «KECHARIS MONASTERY» մակագրություններն են: Վերևի աջ ու ձախ անկյուններում և ներքևի մասում պատկերված են զարդանախշեր:

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

1) Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

2) «Կեչառիս» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 6-ի նիստի «2012 թվականի նոյեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի նոյեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 35
Իրական հատվածի ցուցանիշներ 38
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 41
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 46
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 47
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 58
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 79
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 90
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 92
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 98
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (6.11.2012)

2012 թվականի նոյեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի նոյեմբերի 6-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Ա. Ստեփանյանը, Վ. Աբրահամյանը, Ա. Դարբինյանը, Օ. Աղասյանը

Խորհրդի նիստը սկսվեց հոկտեմբերի վերջի դրությամբ իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները:

2012 թ. հոկտեմբերին արձանագրվել է 1.2% գնաճ, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը բարձրացել է մինչև 3.4%՝ մոտենալով նպատակային ցուցանիշին: Հոկտեմբերին ևս շարունակվել է ամսական գնաճին պարենային ապրանքների գների աճի գերակշռող նպաստման միտումը (նպաստումն ընդհանուր գնաճին՝ 1.0 տոկոսային կետ), որի կառուցվածքում զգալի աճ է դիտվել «Միրգ», «Բանջարեղեն և կարտոֆիլ», «Կենդանական և բուսական յուղեր» և «Հացամթերք» ապրանքախմբերի գներում՝ համապատասխանաբար 5.6%, 9.0%, 3.6% և 2.6% (նպաստումը գնաճին՝ 0.2, 0.6, 0.12 և 0.28 տոկոսային կետ): Հոկտեմբերին 12-ամսյա բնականոն գնաճը հիմնականում համընկել է 12-ամսյա գնաճի ցուցանիշին՝ կազմելով շուրջ 3.5%:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2012 թվականի հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.6%: Անցած 9 ամիսների արդյունքներով տնտեսական ակտիվության բարձր աճը պայմանավորվել է առավելապես արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի թողարկման ծավալների համապատասխանաբար 11.6% և 10.5% աճով: Շինարարության ճյուղի և ծառայությունների ոլորտի թողարկման ծավալների աճը կազմել է համապատասխանաբար 2.9% և 6.8%:

Արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներից 2012 թվականի հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արտահանումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՖՕԲ) ավելացել է 6.0%-ով, իսկ ներմուծումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՍԻՖ)՝ 1.2%-ով: Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է տ/տ 9%-ով:

2012 թվականի երրորդ եռամսյակի արդյունքներով կպահպանվեն մասնավոր սպառման աճի բարձր տեմպերը՝ 8.2%, իսկ մասնավոր ներդրումների նվազման տեմպերն աստիճանաբար կդանդաղեն՝ 1.9%: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը համախառն պահանջարկի վրա գնահատվում է զսպող՝ պայմանավորված և՛ եկամուտների, և՛ ծախսերի զսպող ազդեցությամբ, ինչը որոշ չափով կչեզոքացնի մասնավոր սպառման գնաճային ազդեցությունը:

Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները: Հոկտեմբերին ֆինանսական շուկայում շարունակվել են տոկոսադրույքների կայուն և փոքր-ինչ նվազման միտումները. միջբանկային ռեպո միջին ամսական տոկոսադրույքը կազմել է 8.9% (նախորդ ամսվա համեմատությամբ նվազելով 0.55%-ով), մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում միջին

տոկոսադրույքը՝ 9.58% (աճ՝ 0.15%-ով), բորսայական միջբանկային վարկերի միջին տոկոսադրույքը՝ 7.76% (նվազում՝ 0.33%-ով):

ՀՀ արտարժույթի շուկայում հոկտեմբերին, նախորդ ամսվա միջինի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժևորվել է 0.5%-ով՝ կազմելով 406.7 դրամ, եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 0.6%-ով՝ կազմելով 527.5 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 0.7%-ով՝ կազմելով 13.1 դրամ:

Հոկտեմբերին ԱՄՆ դոլարը եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 0.8%-ով՝ մեկ եվրոյի դիմաց միջինը կազմելով 1.3 (տ/տ արժևորումը՝ 5.6%):

Հոկտեմբերին ձևավորված դրամավարկային միջավայրը բնութագրվել է հետևյալ շարժերով. փողի և դրամային զանգվածների 12-ամսյա աճը կազմել է համապատասխանաբար 23.0% և 18.4%, որոնց կառուցվածքում դրամային ավանդների աճը կազմել է տ/տ 30.2%, իսկ արտարժութային ավանդներինը՝ 29.4% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 21.2%): Հոկտեմբերին ևս պահպանվել են վարկավորման բարձր աճի տեմպերը՝ տ/տ 27.9%, որի կառուցվածքում շարունակել են գերակշռել արտարժույթով տրամադրված վարկերը:

2012 թ. հոկտեմբերին հիմնական հումքային ապրանքների միջազգային շուկաներում դրսևորվել են թույլ գնանկումային, իսկ պարենային ապրանքների շուկաներում՝ գնաճային միտումներ:

«Բրենթ» տեսակի հում նավթի մեկ բարելի միջին գինը հոկտեմբերին, նախորդ ամսվա համեմատությամբ, նվազել է 1.2%-ով (տ/տ աճը կազմել է 2.3%): Հոկտեմբերին ոսկու գինը նվազել է 0.1%-ով (տ/տ աճը՝ 4.4%), արդյունաբերական մետաղներից պղնձի գինը՝ 0.4%-ով (տ/տ աճը՝ 8.8%):

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից հրապարակվող պարենի գների ինդեքսը 2012 հոկտեմբերին, նախորդ ամսվա համեմատությամբ, նվազել է 0.9%-ով (հիմնականում պայմանավորված կենդանական և բուսական յուղերի գների նվազմամբ), որի պայմաններում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ինդեքսը նվազել է 1.1%-ով: Այդուհանդերձ, միջազգային շուկայում հոկտեմբերին համեմատաբար դանդաղ տեմպերով շարունակել է աճել ցորենի գինը՝ 1.4%-ով (տ/տ աճը՝ 23.9%): Շաքարավազի և բրնձի միջազգային գները ևս աճել են համապատասխանաբար 4.7%-ով և 1.9%-ով, որի պայմաններում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ դրանց նվազումը կազմել է համապատասխանաբար 22.5% և 7.9%:

ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը մինչև 2015 թ. կեսը դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը կպահի ցածր՝ 0 - 0.25% միջակայքում, ինչպես նաև կշարունակի երկարաժամկետ տոկոսադրույքների իջեցման քաղաքականությունը՝ բարձր գործազրկության և տնտեսական աճի դանդաղ վերականգնման պայմաններում:

Միջնաժամկետ հորիզոնում՝ խարսխված գնաճային սպասումների, ինչպես նաև թույլ տնտեսական աճի և թիրախից դեռևս բարձր գնաճի պայմաններում Եվրոպական կենտրոնական բանկը հոկտեմբերին կրկին անփոփոխ է թողել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդն անդրադարձավ արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումներին, դրամավարկային քաղաքականության ուղղություններին:

Խորհուրդն արձանագրեց, որ արտաքին հատվածից ակնկալվող թույլ գնաճային ազդեցությունները պահպանվում են: Զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների քաղաքական լուծումների վերաբերյալ անորոշությունների պահպանման պայմաններում կանխատեսվող հորիզոնում ակնկալվում է համաշխարհային պահանջարկի ցածր մակարդակ: Այդուհանդերձ, ցորենի միջազգային գնի բարձր մակարդակի պահպանումը վկայում է պարենային ապրանքների միջազգային շուկայում առկա հիմնարար լարվածության մասին: Վերջինս կշարունակի իր ազդեցությունն ունենալ ներ-

քին գների վրա՝ հանգեցնելով «Հացամթերք» ապրանքախմբի գների աճի: Աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված՝ արտաքին հատվածից հնարավոր են նաև էներգակիրների գնաճային ռիսկեր:

Խորհուրդը գնահատեց, որ կանխատեսվող հորիզոնում ներքին գների վրա ՀՀ տնտեսության զարգացումներից ակնկալվող ազդեցությունը շարունակում է մնալ չափավոր գնաճային՝ պայմանավորված մասնավոր սպառման, հետևաբար և տնտեսական աճի տեմպերի շարունակվող արագացմամբ: Նշված գնաճային գործոնների ազդեցությունը ներքին գների վրա շարունակվելու է որոշ չափով չեզոքացվել հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությամբ:

Հաշվի առնելով վերջին ամիսներին 12-ամսյա գնաճի ցուցաբերած վարքագիծը և կանխատեսվող հորիզոնում արտաքին ու ՀՀ տնտեսությունների կողմից ակնկալվող թույլ գնաճային ազդեցությունները ներքին գների վրա՝ ԿԲ խորհուրդը նպատակահարմար է գտնում ձեռնպահ մնալ վերաֆինանսավորման տոկոսադրույքի մակարդակի փոփոխումից: Այդ պարագայում 12-ամսյա գնաճն առաջիկա ամիսներին կմոտենա 4% նպատակային ցուցանիշին և կանխատեսվող հորիզոնում կպահպանվի այդ մակարդակի շրջանակում:

Միջբանկային շուկայում տոկոսադրույքների տատանումների նվազեցման նպատակով ԿԲ խորհուրդն իրականացնում է ԿԲ կողմից ներգրավվող ավանդի և լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքների միջև եղած տարբերությունը կրճատելու գործընթացի վերջին փուլը՝ 4 տոկոսային կետից դարձնելով 3 տոկոսային կետ:

2012 թվականի նոյեմբերի 6-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%: Լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները սահմանվել են համապատասխանաբար 9.5% և 6.5%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2012 թ. սեպտեմբեր*	*2012 թ. սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2011 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2012 թ. հոկտեմբեր*	*2012 թ. հոկտեմբերի իրական աճի ինդեքսը 2011 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	104.4	-	104.9
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	94322.1	100.3	98881.6	98.0
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	573.9	118.0	606.7	131.4
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	178093.5	109.8	118220.3	101.4
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	202036.6	103.9	199351.2	104.9
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	56776.8	105.0	51847.8	102.1
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	85673.3	109.0	85700.7	109.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	119074[2]	101.8	118861[1]	101.0

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2012 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.6	98.1[1]	99.5	101.5
Փետրվար	99.1	103.9[1]	101.2	98.3
Մարտ	100.1	103.4[1]	95.4	98.2
Ապրիլ	99.4	99.9[1]	100.2	98.5
Մայիս	98.7	98.3[1]	100.5	97.5
Հունիս	98.7	102.2	101.4	90.3
Հուլիս	98.5	98.0	99.7	77.5
Օգոստոս	99.6	100.6	101.5	81.2
Սեպտեմբեր	100.8	101.3	100.0	95.5
Հոկտեմբեր	101.2	102.7	100.2	98.6
2012 թ. հունվար – հոկտեմբերը 2011 թ. հունվար – հոկտեմբերի համեմատությամբ	102.4	106.3	97.1	95.7

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2010*	*2011*	*2012*	*2012*	*2012*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.7	3.4 [2]	3.6	3.6	4.8
Փետրվար	0.3	0.9 [2]	-0.9	2.6	3.0
Մարտ	0.8	0.8	0.1	2.7	2.2
Ապրիլ	1.3	-0.2	-0.6	2.1	1.9
Մայիս	1.0	0.0	-1.3	0.8	0.5
Հունիս	-0.8	-1.4	-1.3	-0.4	0.7
Հուլիս	-0.8	-3.0	-1.5	-1.9	2.3
Օգոստոս	1.3	-0.6	-0.4	-2.3	2.5
Սեպտեմբեր	-0.2	0.8	0.8	-1.5	2.5
Հոկտեմբեր	1.0	0.3	1.2	-0.3	3.4
Նոյեմբեր	1.6	1.2			
Դեկտեմբեր	1.8	2.5			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	9.4	4.7			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	8.2	7.7			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՄԻՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2012 թ. հոկտեմբերը 2012 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**101.2**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**101.9**	**1.03**
Բանջարեղեն և կարտոֆիլ	109.0	0.56
Հացամթերք	102.6	0.28
Միրգ	105.6	0.20
Կենդանական և բուսական յուղեր	103.6	0.12
Ձու	102.5	0.03
Կաթնամթերք	100.7	0.03
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.9**	**0.14**
Կոշկեղեն	102.3	0.04
Հագուստ և գործվածք	101.0	0.03
Դեղամիջոցներ	101.3	0.02
Վառելիք	103.2	0.02
Լվացող միջոցներ	101.0	0.02
Ծառայություններ, որից՝	**100.2**	**0.07**
Տրանսպորտի ծառայություններ	104.8	0.05
Բնակարանային, կոմունալ ծառայություններ	99.3	-0.09
Բուժսպասարկման ծառայություններ	99.6	-0.01

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[3]

ժամանակաշրջան	2009	2010	2011	2012
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	-0.29	0.48	0.71[4]	0.65
Փետրվար	-0.53	0.74	0.42[4]	0.08
Մարտ	1.14	0.82	0.64[4]	0.04
Ապրիլ	1.46	0.70	0.45[4]	0.02
Մայիս	0.41	0.04	0.32[4]	-0.16
Հունիս	0.25	-0.22	0.37[4]	0.35
Հուլիս	-0.22	-0.42	0.21[4]	0.14
Օգոստոս	0.37	0.17	0.27[4]	-0.06
Սեպտեմբեր	0.72	0.63	0.42[4]	0.67
Հոկտեմբեր	0.48	1.21	0.36[4]	0.73
Նոյեմբեր	0.62	1.18	0.41	
Դեկտեմբեր	0.61	0.63	0.55	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	4.63	6.20	6.28[4]	5.27
Փետրվար	3.02	7.59	5.75[4]	4.91
Մարտ	3.33	7.14	5.68[4]	4.27
Ապրիլ	3.47	6.35	5.42[4]	3.81
Մայիս	3.37	5.92	5.75[4]	3.30
Հունիս	3.36	5.40	6.32[4]	3.26
Հուլիս	3.20	5.16	6.95[4]	3.19
Օգոստոս	3.52	4.96	7.01[4]	2.85
Սեպտեմբեր	3.71	4.86	7.01[4]	3.10
Հոկտեմբեր	4.16	5.53	6.09[4]	3.48
Նոյեմբեր	4.72	6.16	5.37	
Դեկտեմբեր	5.25	6.26	5.29	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**103.48**
Հավի բուդ	0.28
Բենզին	0.22
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.20
Ալյուր բարձր տեսակի	0.18
Ծխախոտ «Գառնի»	0.18
Բրինձ	0.13
Պղպեղ (սև)	0.11
Աղացած սև սուրճ	0.10
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.09
Խոզի միս	0.09
Եփած երշիկ	0.08
Ծառայություններ առողջարանների և այլ առողջարանային հաստատությունների, կացության, բուժման և սպասարկման ապահովմամբ	0.08
Բաստուրմա	0.08
Կարամել	0.07
Բուսական յուղ (արևածաղկի)	0.06

[1] Տվյալները վերահայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

[3] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[4] Տվյալները վերահայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամփոփում	*2012 թ. հունվար - սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար - սեպտեմբերը 2011 թ. հունվար - սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2012 թ. հունվար - հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար - հոկտեմբերը 2011 թ. հունվար - հոկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1032.0	106.0	1166.0	107.3
Ներմուծում *(ՍԻՖ)*	3009.6	101.2	3437.1	102.1
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1977.6	98.8	2271.1	99.7

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-հոկտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1088445	149723	938722	1364892	186441	1178451
ԱՄՆ	112545	112078	467	138384	145332	-6949
Ուկրաինա	22511	21106	1405	26790	25151	1640
Ղազախստան	18558	1948	16610	23407	2274	21133
Գերմանիա	20962	22601	-1639	25601	27604	-2003
Իսպանիա	8260	8554	-294	9891	10142	-252
Ֆրանսիա	14940	19924	-4984	18872	24773	-5901
ԱՄԷ	16927	47358	-30431	19141	57937	-38797
Չինաստան	2830	66454	-63623	3518	83256	-79738
Թուրքիա	4961	29509	-24548	6197	36078	-29881
Այլ երկրներ	248947	171448	77500	323341	224558	98783
Ընդամենը	**1559886**	**650701**	**909185**	**1960033**	**823547**	**1136486**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար-հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	189992	29984	160008	1325003	207668	1117336
ԱՄՆ	13140	10981	2160	104451	90428	14023
Ուկրաինա	2028	1972	56	17089	16929	160
Ղազախստան	2788	190	2599	21004	1392	19611
Գերմանիա	3173	4219	-1046	22516	28318	-5802
Իսպանիա	567	902	-335	6417	9135	-2718
Ֆրանսիա	1878	5238	-3361	15710	22130	-6420
ԱՄԷ	3144	6772	-3628	19950	43211	-23261
Չինաստան	269	7926	-7657	5009	66499	-61490
Թուրքիա	441	2637	-2195	2680	24667	-21986
Այլ երկրներ	29938	16504	13434	267788	200404	67383
Ընդամենը	**247358**	**87323**	**160035**	**1807617**	**710782**	**1096835**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-հոկտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1031803	113358	918445	1295163	141352	1153811
ԱՄՆ	60331	22150	38182	74380	27331	47049
Ուկրաինա	21089	13515	7574	25076	16202	8874
Ղազախստան	16400	1509	14890	20611	1769	18842
Գերմանիա	8868	5723	3145	10695	6905	3790
Իսպանիա	6248	2489	3760	7674	3052	4622
Ֆրանսիա	8594	6782	1812	10874	7668	3206
ԱՄԷ	2672	6186	-3513	3387	7660	-4273
Չինաստան	416	7174	-6758	529	8748	-8219
Թուրքիա	1930	4057	-2126	2136	4981	-2845
Այլ երկրներ	79686	31928	47758	96434	38934	57499
Ընդամենը	**1238037**	**214870**	**1023167**	**1546959**	**264602**	**1282357**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար-հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	158814	17155	141659	1172315	131000	1041315
ԱՄՆ	5509	2344	3165	55295	20416	34880
Ուկրաինա	1953	1394	559	15730	12150	3580
Ղազախստան	2429	179	2250	17648	1274	16374
Գերմանիա	1754	568	1186	9500	6630	2871
Իսպանիա	540	248	291	5219	3217	2002
Ֆրանսիա	1193	436	757	9318	4199	5119
ԱՄԷ	378	671	-293	6754	5533	1221
Չինաստան	80	964	-884	2757	8944	-6187
Թուրքիա	96	411	-315	1386	3299	-1913
Այլ երկրներ	8169	4673	3496	71572	36075	35497
Ընդամենը	**180914**	**29043**	**151871**	**1367494**	**232736**	**1134757**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ)[1,2]

2011	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	139.4	137.5	133.3	128.2	127.7	126.2	125.5	124.9	127.6	126.8	126.6	131.0
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	228.0	224.6	218.4	211.6	211.7	211.9	216.5	217.3	221.7	220.9	217.7	221.4
2012	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	135.3	130.6	129.6	127.5	126.5	122.4	121.6	120.1	118.4	120.0		
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	221.0	216.3	215.7	214.3	215.6	211.8	214.1	213.3	210.4	210.3		

[1] Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով: Հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնածի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը:

[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011	2012									
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	***1932.5***	**1730.3**	**1758.1**	**1714.2**	**1687.9**	**1675.8**	**1671.3**	**1674.7**	**1725.8**	**1692.3**	**1709.0**
Համախառն միջազգային պահուստներ	***1932.5***	**1730.3**	**1758.1**	**1714.2**	**1687.9**	**1675.8**	**1671.3**	**1674.7**	**1725.8**	**1692.3**	**1709.0**
Ոսկի	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	57.0	57.6	54.8	54.6	50.0	43.3	59.6	59.3	56.9	6.7	6.7
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0.0	0	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1875.4	1672.7	1703.3	1659.6	1638.0	1632.6	1611.7	1615.4	1668.9	1685.6	1702.3

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011	2012									
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**754.1**	**763.0**	**770.0**	**769.9**	**765.5**	**749.0**	**746.2**	**743.1**	**751.9**	**731.2**	**727.9**
ԱՄՀ վարկ	518.0	523.8	524.1	522.7	518.6	501.7	497.1	494.4	497.6	473.0	469.1
ՀՓԻ տեղաբաշխում	135.1	136.5	136.9	136.3	136.4	132.9	133.6	132.8	133.9	135.5	135.6
Այլ վարկեր	100.7	101.9	108.3	110.6	110.0	114.0	115.3	115.7	120.2	122.4	122.8
Այլ պարտավորություններ	0.3	0.8	0.6	0.3	0.5	0.4	0.3	0.2	0.2	0.4	0.4


[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	տեղաբաշխված արժեթղթեր	ընդամենը	կենտրոնական կառավարության կարճաժամկետ և երկարաժամկետ արժեթղթեր	կենտրոնական կառավարության հաշիվներում մնացորդներ	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2011								
Դեկտեմբեր	12953	12953	75721	3418	1	547	79687	**-66735**
2012								
Հունվար	13193	13193	98748	3019	1	549	102316	**-89123**
Փետրվար	12719	12719	97549	3017	1	551	101119	**-88400**
Մարտ	14053	14053	92628	3012	1	554	96195	**-82142**
Ապրիլ	14593	14593	82515	2845	1	556	85917	**-71324**
Մայիս	15797	15797	96680	2389	1	575	99646	**-83849**
Հունիս	13916	13916	105203	2231	1	593	108028	**-94112**
Հուլիս	14126	14126	98200	3035	1	578	101815	**-87689**
Օգոստոս	13708	13708	99477	3050	1	579	103107	**-89399**
Սեպտեմբեր	13578	13578	101107	2588	1	576	104273	**-90695**
Հոկտեմբեր	13445	13445	99065	2592	1	575	102233	**-88788**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Ժամանակաշրջան	Փողի բազա [1] *(մլրդ ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլրդ ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլրդ ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M2 [3] *(մլրդ ՀՀ դրամ)*	Արտարժույթով ավանդներ *(մլրդ ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլրդ ՀՀ դրամ)*	Փողի բազայի վրա [5]	Դրամայնացման գործակից [6]
2011										
Դեկտեմբեր	671271	349407	164385	513792	145644	659437	467542	1126978	1.68	1.16
2012										
Հունվար	572232	318965	154751	473716	145846	619563	477679	1097241	1.92	1.18
Փետրվար	562946	319511	154705	474216	157250	631466	482181	1113647	1.98	1.22
Մարտ	553757	321270	156682	477951	171903	649855	484507	1134362	2.05	1.25
Ապրիլ	589452	337153	154533	491687	174401	666087	493694	1159781	1.97	1.20
Մայիս	580321	335804	150316	486120	174081	660201	514705	1174906	2.02	1.20
Հունիս	563613	338897	143646	482543	172276	654819	540709	1195528	2.12	1.25
Հուլիս	601089	352815	153093	505908	170018	675926	538788	1214714	2.02	1.21
Օգոստոս	604641	354960	149588	504548	172448	676997	564213	1241210	2.05	1.22
Սեպտեմբեր	603848	355441	160338	515778	173326	689105	578184	1267289	2.10	1.24
Հոկտեմբեր	641606	360651	162579	523229	178092	701322	577825	1279147	1.99	1.20

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
700000
630000
560000
490000
420000
350000
280000
210000
140000
70000
0
08
09
10
11
12
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
08
09
10
11
12
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
45
35
25
15
05
06
07
08
09
10
11
12


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
70
60
50
40
30
05
06
07
08
09
10
11
12


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2011					
Հունվար	468928	283394	397594	488612	879365
Փետրվար	489953	289756	408898	510273	900769
Մարտ	508844	297115	423929	534302	924571
Ապրիլ	516360	301953	430757	538589	942240
Մայիս	512353	305597	436378	548340	967806
Հունիս	537286	306566	442832	557965	984844
Հուլիս	535625	309709	453699	571616	1003282
Օգոստոս	579815	312907	454086	578051	1014568
Սեպտեմբեր	566078	314258	457473	580468	1026427
Հոկտեմբեր	574417	317752	462178	590521	1046747
Նոյեմբեր	582996	319199	466064	597911	1065117
Դեկտեմբեր	604639	321537	477315	616199	1084433
2012					
Հունվար	579873	324411	483183	625076	1096265
Փետրվար	574568	327602	485627	643706	1101894
Մարտ	562330	337773	497615	671762	1129480
Ապրիլ	596544	349555	513541	696509	1167149
Մայիս	605507	343897	500595	683009	1185132
Հունիս	582673	341620	488235	663016	1201851
Հուլիս	611184	344098	497957	667726	1204995
Օգոստոս	601063	346493	497514	671480	1237402
Սեպտեմբեր	601276	351441	508355	683628	1270486
Հոկտեմբեր	631651	351952	512560	693591	1283500

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

Ցուցանիշներ	2011	2012									
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***460046***	***374707***	***383279***	***367377***	***358963***	***367962***	***366036***	***370632***	***384417***	***374064***	***382945***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***211224***	***197524***	***179667***	***186380***	***230489***	***212359***	***197577***	***230456***	***220224***	***229785***	***258661***
Կառավարություն	-66735	-89123	-88400	-82142	-71324	-83849	-94112	-87689	-89399	-90695	-88788
Բանկեր	137020	120020	98737	97975	124714	117515	108633	128417	119990	126267	149867
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	46345	28597	6523	11534	43144	20815	42713	38587	34543	46571	45771
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	0	0	0	-7001	-13043	0	-32005	0	-5001	-21008	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	-10002	-10002	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	140939	166627	169330	170548	177100	178693	183057	189729	189633	194213	197582
